

кий (бихевиористский) подход был тесно связан с системной методологией изучения политической системы.

На основе анализа фактического материала показывается, что в трудах представителей английской "новой политологии" политическая система рассматривается как с теоретической (сущность и роль институциональных мега-, мезо- и микроструктур, функции системы, государственный суверенитет, соотношение политической реальности и ее субъективное восприятие и т.д.), так и с практической (усовершенствование демократических основ государства, политической идеологии, местного самоуправления, практической деятельности политических партий, рабочего движения, групп давления, политической культуры, поведения и т.д.) точек зрения.

Обосновывается также, что данный подход английскими политологами был выработан с целью сохранения и гармонизации status-a quo политической системы.

CONCEPTIONS OF ENGLISH POLITICAL SCIENCE ON POLITICAL SYSTEM OF SOCIETY

A. A. KALASHYAN

In the second half of XX century "a new political science of England" was founded on the basis of "Americanization" of political science in Europe which used the behavioral approach along with the systematic methodology of studying political systems.

On the basis of the analysis of factual material the author shows that the representatives of the "new political science" of England analyzed the political system from the theoretical (essence and role of institutional mega structures, mezzo structures and microstructures, system functions, State sovereignty, the relationship of political reality with its subjective comprehension, etc.) and practical (improvement of democratic institutions, political ideology, local self-government, activities of political parties, labor movement, pressure groups, political culture, behavior, etc.) viewpoint.

The article shows that the English political scientists worked out the mentioned approach for the maintenance and harmonization of status quo of political system.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա. Ա. ՔԱՆԱՇՅԱՆ

Քաղաքական գիտությունների թեկնածու

«Իշխանություն» երևույթը քաղաքագիտության հիմնարար այն սկզբունքներից է, որն էապես կապված է հասարակության քաղաքական համակարգի գործառնական առանձնահատկություններին: Դա բացատրվում է նրանով, որ «իշխանություն» երևույթն իր համակարգում ներառում է բազմաբնույթ, բազմաշերտ և բազմաչափ քաղաքական և հասարակական հարաբերությունների մի ողջ գամմա: Այդ գործոններով պայմանավորված՝ իշխանությունն աչքի է ընկնում մաև ծայրաստիճան ընդարձակ գործառնական ոլորտով: Կարելի է նույնիսկ ասել, որ **այն գոյություն ունի ամենուր, որտեղ առկա են մարդկանց կայուն և ամբողջական տեսք ստացած կառույցներ** (ընտանիք, արտադրական կոլեկտիվ, հա-

սարակական զանազան խմբեր, կազմակերպություն, հաստատություն, պետություն): Այդ ամենից տրամաբանորեն հետևում է, որ իշխանության ցանկացած դրսևորում, առավել ևս քաղաքական իշխանություն, ունի իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններով: Այդ իսկ պատճառով էլ կոնկրետ ուսումնասիրության տրամաբանությամբ թելադրված՝ առաջնային նշանակություն է ձեռք բերում այն հարցերի պարզաբանումը, որոնք թույլ են տալիս վեր հանել իշխանության էության, կառուցվածքի և տարրերի, սուբյեկտի և օբյեկտի, տիրապետության, հարկադրանքի և ենթակայության փոխհարաբերությունների բազմատեսանկյուն հարաբերությունները: Գիտագործնական մեծ կարևորություն ունի նաև իշխանության պաշարների, կիրառության սահմանների, գործառնական տարատեսակների և լեզվատիմության հիմնահարցերի պարզաբանումը, հաշվի առնելով այն, որ «... քաղաքական տարածության մետրիկան որոշվում է աշխարհագրական-գաղափարական բազմազանությամբ»¹: Քննարկվող համատեքստում մեծ կարևորություն է ձեռք բերում հատկապես քաղաքական իշխանության հիմնահարցը, քանի որ «իշխանություն» երևույթն իր էությամբ և բազմաշերտությամբ ամբողջական կերպարանք է ստանում հատկապես քաղաքական իշխանության տեսքով: Այդ ամենի հաշվարկով էլ հարկ ենք համարում առաջին հերթին անդրադառնալ քաղաքական իշխանության ընդհանրական որակների և դրանց վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների համեմատական ուսումնասիրությանը:

Այդ համատեքստում նախ հարկ է նշել, որ մասնագիտական գրականության մեջ «իշխանություն» երևույթը քննարկվում է գոյաբանական, իմացաբանական, գործառնական և բազմաթիվ այլ տեսանկյուններից: Լինելով քաղաքական սուբյեկտի կամային գործունեության իրականցումը՝ ցանկացած մակարդակի (և տիպի) իշխանության ձևավորման համար ամենից առաջ անհրաժեշտ է համապատասխան **«գոյաբանական հարթություն»**, ինչն արձանագրում է այն իրողությունը, թե տվյալ կեցությանը բնորոշող ցանկացած իրադարձության հիմքում ընկած է կոնկրետ քաղաքական պատճառականություն²:

Ու թեև այդ մոտեցումը մեթոդաբանական տեսանկյունից հանրաճանաչ է քաղաքագիտության համար, մույնը չի կարելի ասել քաղաքական իշխանության էության ըմբռնումների մասին: Ավելի ճիշտ՝ կախված այն բանից, թե ինչպես է մեկնաբանվում հասարակական-քաղաքական համակարգի էությունը, ըստ այդմ էլ քաղաքագիտական տարբեր դպրոցների և քաղաքագետների կողմից «քաղաքական իշխանություն» երևույթը տարբեր մեկնաբանություն է ստանում:

Չայտնի է, որ պետության ձևավորումն իրենով նշանավորում է նաև պետական հարկադրանքի վրա ձևավորված համապատասխան **պետական իշխանության** ձևավորում: Այդ համատեքստում քաղաքագիտության շրջանակներում անառարկելի է համարվում այն, որ իբրև քաղաքական կյանքի կազմակերպման և կառուցվածքային հիմնական ձև՝ պետության բնութագրիչ առանձնահատկություններից մեկը **քաղաքական իշխանության ձևավորումն է**: Այդ ամենից հետևում է, որ քաղաքական իշխանության կրողը հանդիսանում է պետությունը, և որ պետության ձևավորմամբ էլ կազմակերպչական ավարտուն տեսք է ստա-

¹ Ильин В. В., Панарин А. С. Философия политики. М., 1994, с. 78.

² Տե՛ս նույնը, էջ 77:

նում հասարակության քաղաքական կյանքը: Հետևաբար քաղաքական իշխանությունը հանդես է գալիս իբրև հասարակության քաղաքական համակարգի այնպիսի հատկանիշ, որի ղեկավարության և հսկողության ներքո իրականացվում է համակարգի կառուցվածքային մյուս տարրերի պարտականությունների կատարումը³: Լինելով իշխանության կարևորագույն տարրերից մեկը՝ «... քաղաքական և պետական իշխանությունը հանդիսանում է այն յուրահատուկ չափանիշը, որի շնորհիվ քաղաքականությունը հանդես է գալիս ինքնուրույն օբյեկտի որակով ... : Այն իբրև առանձնահատուկ հասարակական երևույթ՝ քաղաքականությունը տարանջատում է հասարակական մյուս երևույթներից»⁴: Եվ քանի որ հասարակական կյանքում քաղաքական գործունեություն իրականացվում է ոչ միայն պետության, այլև քաղաքական համակարգի այլ ինստիտուտների (քաղաքական կազմակերպություններ, կուսակցություններ, աջակցող խմբեր և այլն) կողմից, ապա ավելի քան ակնհայտ է, որ «... ամեն մի քաղաքական իշխանություն պետական իշխանություն չէ, այն դեպքում, երբ ամեն մի պետական իշխանություն քաղաքական իշխանություն է»⁵:

Քաղաքական իշխանությունը միաժամանակ ունի իր բնութագրիչ առանձնահատկությունները: Քաղաքագիտական համակարգային վերլուծության շրջանակներում առանձնացվում են քաղաքական իշխանության հիմնարար այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են հրապարակային իշխանությունը, պետության շրջանակներում լեգալացված ուժի կիրառումը, հասարակական կյանքի ցանկացած բնագավառում իշխանական որոշումների միակենտրոնությունն ու գերակայությունը, իշխանության բազմադեմ պաշարների օգտագործումը և այլն⁶:

³ Տե՛ս **Parsons T.** Sociological Theory and Modern Society. New York, 1967, p. 308; Ֆրանսիացի քաղաքագետ Մ. Դյուվերթեն պնդում է, որ «բոլոր ժամանակներում պետությունը գործել է իբրև հասարակական մի շերտի կամ խմբի տիրապետության գործիք մյուսների վրա, իբրև իշխողների կամքը կյանքի կոչելու և պաշտպանելու միջոց և կառավարվողների շահերի սահմանափակում», տե՛ս **Duverger M.** The Idea of Politics: The Uses of Power in Society. London, 1966, p. XIII.

⁴ **Егоров С. А.** Политическая система, политическое развитие, право: критика не-марксистских политологических концепций. М., 1983, с. 84.

⁵ Նույն տեղում, էջ 90:

⁶ Մեթոդաբանական այդ մոտեցման մանրամասները տե՛ս **Dahl R. A.** The Analysis of Influence in Local Communities // Social Science and Community Action. East Lansing, 1960, p. 31; **Пырачев В. П., Соловьев А. И.** Введение в политологию. М., 2002, с. 105-106: Քաղաքագիտության և քաղաքականության օբյեկտի պաշարանում պետությունը սահմանվում է իբրև «քաղաքական այնպիսի որոշակի համակարգ, որի նպատակը որոշակի սահմաններով տարածքի ներսում իշխանության կազմակերպումն է հանուն ընդհանուր շահերի», տե՛ս Օբյեկտի բառարան. քաղաքագիտություն և քաղաքականություն, Երևան, 2003, էջ 505: Արևմտյան քաղաքագիտական բառարաններում պետությունը սահմանվում է նաև իբրև «մարդկանց համատեղ գործունեության միասնական կարգ», իբրև «միավորված ընդհանրություն», տե՛ս Dictionary of Political Science. Dunner, Joseph, London, 1965, p. 498; Կան նաև այնպիսիք, որոնք վստահաբար պնդում են, թե «պետությունը հասարակական ինստիտուտ («ագենտ») է, որն օժտված է ուժ գործադրելու լիազորություններով և համապատասխան միջոցներով, այսինքն՝ հասարակության վրա հարկադրական վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ», տե՛ս Dictionary of Sociology and Related Science. London, Totowa N. J., Littlefield, 1968, p. 341.

Պրակտիկ կյանքում իշխանական գործառույթներ իրականացնելու միտումով էլ պետությունը կյանք է տալիս քաղաքական ինստիտուտային կառույցներին: Իսկ դա նշանակում է, որ քաղաքական համակարգի շրջանակներում «պետությունը գործառնություն է կատարում այն սկզբունքների հիման վրա, որոնք ապահովում են տարբեր տիպի օրգանների (կառույցների՝ Ա. Ք.) աստիճանակարգված կառուցվածքն ու ենթակայությունը, սեփական տարածքում գործունեության համապարփակությունը, պետական հարկադրանքների պարտադիր լինելը: Դրանով էլ այն առանձնանում է քաղաքական համակարգի այլ սուբյեկտներից ...»⁷: Այստեղից էլ այն հետևությունը, որ **պրակտիկ քաղաքական կյանքում կառավարումն իր ամբողջության մեջ կարող է իրագործվել միայն պետության անունից:** Այդ միտումով էլ պետությունն ինքն է գոյավորում գործառնական բազմադեմ հատկանիշներով օժտված ամենատարբեր իշխանական կառույցներ: Եվ, վերջապես, քննարկվող համատեքստում պետք է կարևորել և այն, որ պետական իշխանության և կառավարման հարաբերությունների իրականացման գործում դրսևորվում է պետության հիմնարար՝ **կարգավորման գործառույթը**, որը նա իրականացնում է օրինականացված կամ լեգիտիմ ուժի (որպես կանոն՝ հարկադրանքի, անհրաժեշտության դեպքում նաև բռնության) դիրքերից:

Քաղաքական իշխանության ձևավորման գործում պետության վերը թվարկված հատկանիշների վերլուծությունը տրամաբանորեն հանգեցնում է այն հետևությանը, որ «պետությունը քաղաքական համակարգի նորմատիվ կենտրոնն է ... և արդարացումը»⁸, որը բացատրվում է նրանով, որ քաղաքական կյանքում պատճառահետևանքային հարաբերությունների առանցքը կազմում է իշխանությունը, որը հասկացվում է իբրև այնպիսի միջնորդ, որը շրջապատույտ է կատարում քաղաքական համակարգում: Այդ համատեքստում **իշխանությունը հանդես է գալիս որպես համընդհանրական երևույթ**, որի պատճառն այն է, որ իշխանության ոլորտ են ներառվում հասարակական և քաղաքական հարաբերությունների ու ընթացակարգերի բոլոր ոլորտները: Կարելի է նաև վստահաբար պնդել, որ **իշխանությունն օժտված է յուրահատուկ ամենուրեքությամբ**, քանի որ կյանքի է կոչվում հասարակական և քաղաքական կյանքի բազմաստիճան հարաբերություններով և դրսևորվում է գործունեության մեջ: Մասնագիտական գրականության մեջ խոսվում է նաև իշխանության **բազմամակարդակ** էության մասին, քանի որ պրակտիկ կյանքում այն դրսևորվում է **մարդկանց համատեղ գործունեությունը ղեկավարող գործառույթի** որակով: Եվ քանի որ մարդկային գործունեությունն ընթանում է տարբեր հարթություններում, դրանով էլ պայմանավորվում է **իշխանության հասարակական բնույթը:**

Մյուս կողմից՝ պետության ձևավորմամբ իշխանությունը ձեռք է բերում նաև քաղաքական բնույթ (=քաղաքական իշխանություն): Դա բավականին բարդ գործընթաց է, որն էլ պայմանավորում է իշխանություն-քաղաքականություն հարաբերության երկաստիճան բնույթը: Բանն այն է, որ հասարակական-քաղաքական կյանքում իշխանությունն ամենից առաջ հանդես է գալիս որպես քաղաքա-

⁷ Актуальные проблемы современного политического развития (очерки теории). М., 1982, с. 13-14.

⁸ Almond G. A, Powell G. B. Comparative Politics: A Developmental approach, p. 46.

կանության իրագործման միջոց և երկրորդ, նաև քաղաքականության շնորհիվ է ձեռք բերվում իշխանություն: Ահա այդ ամենի հաշվարկով էլ քաղաքագիտությունը փաստում է, որ քաղաքական իշխանությունը և ընդհանրապես հասարակության քաղաքական կյանքը գործառնում են համակարգված կառույցների և նորմերի միջոցով: Այդ հրամայականով էլ քաղաքագիտությունը մեծ տեղ է հատկացնում նաև քաղաքական կյանքի կառուցվածքային տարրերի ուսումնասիրությանը և պնդում, որ այն ներառում է փոխհարաբերության մեջ գտնվող կառուցվածքային տարրեր ենթահամակարգեր՝ ինստիտուտային բարձրագույն **մեզամակարդակ**, որը կազմում է քաղաքական կյանքի ինստիտուտային վերին կառույցը, միջին **մեզոմակարդակ**, որը կազմում է միջին կամ միջանկյալ ինստիտուտային կառույցը, ինչպես նաև ոչ ինստիտուտային **միկրոմակարդակ**, որը կազմում են զանգվածային ներքին կառույցները⁹:

Այդ կապակցությամբ հարկ ենք համարում նշել նաև այն, որ քաղաքական իշխանության կառուցվածքային և գործառնական ուսումնասիրության առաջնությունը թելադրվում է բուն քաղաքական համակարգի կողմից, քանի որ քաղաքական կյանքը բնութագրող մեզա- և մեզո- ենթահամակարգերը երկակի դեր են կատարում: Մի կողմից քաղաքական կյանքի այդ վերին մակարդակները իրենցով պայմանավորում են հասարակության քաղաքական համակարգի կառուցվածքը և կառուցվածքային տարրերի ամբողջությունը, իսկ մյուս կողմից՝ ամբողջության մեջ կազմում քաղաքական իշխանության էությունը բացահայտող **հասարակության քաղաքական վարչակարգը**: Իսկ դրանից հետևում է, որ հասարակության քաղաքական կյանքը բնութագրող նշված տարրերը կոչված են հասարակական հարաբերությունները ներդաշնակեցնելու միջոցով ապահովել համակարգի կայունությունն ու կենսունակությունը և նպաստել նրա գործունեության իրականացմանը: Օրենքով սահմանված կարգով դրանք լուծում են նաև հասարակական կոնֆլիկտներն ու հակասությունները, «հասարակական դաշինք» հաստատելու միտումով միավորում հասարակական և քաղաքական տարրեր կազմակերպությունների, շարժումների ու խմբերի շահերը և այլն:

Փիլիսոփայության և նրա հետևության մեջ քաղաքագիտության հանրաճանաչ տեսակետի համաձայն ցանկացած համակարգի գործառնության և վերարտադրության համար ներքին և արտաքին միջավայրը չափազանց կարևոր դեր է կատարում: Այդ առումով վերլուծական ելակետ պետք է համարել այն, որ «**միջավայրի պայմանները, առանց որոնց տվյալ համակարգը չի կարող գործառնել և զարգանալ, էական են, անհրաժեշտ** (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»¹⁰: Սակայն անառարկելի է և այն, որ միջավայրի պայմանները գործառնական առանձնահատուկ դեր են կատարում ոչ թե ինքնին, ոչ թե առանձնության մեջ, այլ քաղաքական համակարգի ինստիտուտային կառույցների և կառավարման համակարգի ձևավորման, հասարակության միավորման, վերահսկման և այլ գործառնությունների համատեքստում: Նշված փոխառնչությունների ոլորտն էլ իրենով պայմանավորում է քաղաքական իշխանության ձևավորման ընդհանուր ուղղվածությունը, քանի որ վերջինս լինելիության բավականին բարդ գործընթաց է, իսկ

⁹ Стен Политология: Энциклопедический словарь. М., 1993, с. 275.

¹⁰ Афанасьев В. Г. Системность и общество. М., 1976, с. 150-151.

լինելիությունն այլ բան չէ, քան ծագման և կայացման միասնություն¹¹: Մեկ նկատառում ևս: Ձևավորվելով որևէ հարաբերության արդյունքում՝ իշխանության գոյաբանական հիմքերն ընկած են բացառապես հասարակական հարաբերությունների ոլորտում և իրեն գոյավորող պայմանների թելադրանքով իշխանությունը, իր ընդհանրական որակներով հանդերձ, ձեռք է բերում նաև առանձնահատուկ գծեր: Դա է պատճառը, որ պատմական դարաշրջանները և հասարակական-քաղաքական փոփոխությունները իրենց անջնջելի կնիքն են թողնում իշխանության կազմավորման և գործառնության մեխանիզմների վրա: Եվ քանի որ ամեն մի նոր ձևավորվում է միայն հնի ընդերքում, ապա այդ առնչությամբ էլ քննարկման առանձնահատուկ օբյեկտ է դառնում **քաղաքական իշխանություն-օրենք-օրինականություն փոխհարաբերության հարցը, այլ կերպ ասած՝ դրվում է իշխանության լեգիտիմության հիմնահարցը**:

Համեմատական վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ արժեքային մոտեցումների և աշխարհայացքային տարասեռության պատճառով լեգիտիմության վերաբերյալ քաղաքագիտական հայեցակարգերը բազմաթիվ հարցերում միմյանցից էապես տարանջատվում են: Այսպես, Ֆ. Բուրլացկին և Ա. Գալկինը գտնում են, որ լեգիտիմությունն ասելով պետք է հասկանալ քաղաքական և իրավական պաշտոնական նորմերի հետ քաղաքական կյանքի համապատասխանությունը: Ընդ որում, նրանց համոզմամբ, լեգիտիմությամբ օժտված են ոչ միայն պետությունն ու պետական իշխանությունը, այլև հասարակական բոլոր (այդ թվում և հոգևոր) ենթահամակարգերը¹²: Որոշ հեղինակներ լեգիտիմությունը մեկնաբանում են իբրև հասարակական կյանքում սեփականության և իշխանության կոնկրետ համակարգը պահպանելուն միտված տիրապետող դասակարգի շահերին համապատասխանող արժեքների բաշխում¹³: Մի մասն էլ պնդում է, թե լեգիտիմության հիմքում ընկած է պետական իշխանության համար հասարակական խմբերի (էլիտաների) պայքարը, և որ այդ խմբերի կողմից էլ «լեգիտիմության մեխանիզմները» կյանքի են կոչվել քաղաքական միավորման հասարակական հենք գտնելու և զանգվածային քաղաքական գիտակցություն ձևավորելու միտումով¹⁴:

¹¹ Հայեցակարգային այդ ըմբռնման մանրամասները տես **Аверьянов А. Н.** Система: философская категория и реальность. Киев, 1985, с. 112.

¹² Տես **Бурлацкий Ф. М., Галкин А. А.** Социология. Политика. Международные отношения. М., 1974, с. 176.

¹³ Политические системы современности (очерки). М., 1978, с. 10. Հիմք ընդունելով, որ իշխանության իրագործման միջոցները, դրսևորումները, իրագործման ձևերն ու եղանակները փոխադարձաբար ազդում են հասարակական կառույցի ընդհանուր կամ հարակից կարգավորման համակարգի վրա՝ Ի. Կրավչենկոն գտնում է, որ այդ ամենը միայն «պայմանականորեն են սխեմատիկ ընթերցման ենթարկվում»: Այդ հիման վրա նա պնդում է. «իշխանության որպես ուժի դրսևորման լայն տարածված մեկնությունը հարկադրում է հարց բարձրացնել այդ ուժի բարոյական, իրավական, հասարակական, քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական և այլ բնույթի մասին»: Նա համոզված է նաև, որ այդ համատեքստում էլ պետք է անդրադառնալ իշխանության լեգիտիմության հիմնահարցին, տես **Власть: Очерки современной политической философии Запада.** М., 1989, с. 46-47.

¹⁴ Развитие политических систем в современном мире. М., 1981, с. 23.

Հարկ ենք համարում մատնանշել, որ Լեզիտիմության նշված ըմբռնումները մակերեսային են, քանի որ քաղաքական այդ երևույթին ուղղակի կամ ծպտված կերպով իրավական գործառնություններ են վերագրում այն դեպքում, երբ **Լեզիտիմությունն իրավական գործընթաց չէ**¹⁵: Իրականում **Լեզիտիմությունն այլ բան չէ, քան հասարակության կողմից կոնկրետ իշխանության և քաղաքականության ճանաչում և ընդունում, իշխանության և քաղաքականության նկատմամբ վստահություն ու աջակցություն, քաղաքական որոշումների արդարացում, քաղաքական կառույցների ստեղծում, դրանց փոփոխություն և նորացում**: Լինելով քաղաքական իշխանությունը բնութագրող անհրաժեշտ հատկանիշներից մեկը՝ **Լեզիտիմությունը կոչված է առանց հարկադրանքի ապահովելու ենթակայությունը, փոխհամաձայնությունն ու քաղաքական մասնակցությունը**: Իսկ եթե ինչ-որ պատճառներով քաղաքական կյանքում նշված որակները չեն դրսևորվում, ապա իշխանությունն իրեն բնորոշ ուժի և բռնության դիրքերից հարկադրանք է կիրառում¹⁶:

Լեզիտիմության նման ըմբռնումը ձևավորվել է արևմտյան քաղաքագիտության շրջանակներում և հայեցակարգային ավարտուն տեսք է ստացել Մ. Վեբերի շնորհիվ: Նա Լեզիտիմության հիմնահարցը քննարկել է իշխանության (տիրապետության) սոցիոլոգիական (վարքաբանական) բնութագրության տեսանկյունից, ուր մեծ տեղ է հատկացվել ուժի (բռնության) մոնոպոլ կիրառման հիմնահարցին¹⁷: Ի տարբերություն վեբերյան ըմբռնման՝ Դ. Իստոնի քաղաքագիտության ամերիկյան դպրոցն առաջադրել է Լեզիտիմության գործառնական (հարմարվողական) մոդել, որը Լեզիտիմությունը փորձում է բացատրել իշխանության և հպատակների միջև «արժեքային նվազագույն հավասարակշռություն» հաստատելու տեսանկյունից¹⁸:

Լեզիտիմության վեբերյան ըմբռնումը, լայն տարածում ունենալով արևմուտքում, հետագայում զարգացվել է արևմտյան քաղաքագիտության կողմից: Դ. Իստոնն, օրինակ, պնդում է, որ «Լեզիտիմ է այն կառավարությունը, որը համապատասխանում է արդարության և այդ ինստիտուտի (կառավարության՝ Ա. Ք.) հա-

¹⁵ Այդ տեսանկյունից հիմնավորված պետք է համարել Ի. Կրավչենկոյի այն պնդումը, թե իրավաբանական ցանկացած համակարգ խրախուսում է պետական իշխանության գործունեության համար փոփոխականի որակով հաստատված խաղի կանոնները: Այդ դիրքերից էլ նա փաստում է, որ «ցանկացած պետության (ինչպես նաև՝ տիրապետող դասակարգի) ինստիտուտային հիմքերն այնպես է կառուցվում, որ այն միաժամանակ գործառնի և՛ օրենքների համապատասխան, և՛ ընդդեմ օրենքների ... Անօրինականությունը և օրինականությունը կազմում են միևնույն ինստիտուտային կառույցների մասերը», տե՛ս Власть: Очерки современной политической философии Запада, с. 53.

¹⁶ Տե՛ս Политология: Энциклопедический словарь, с. 151-152; Политология: Словарь-справочник (М. А. Василик, М. С. Вершинин и др.). М., 2000, с. 131-132, **Վ. Պոլոսյան, Կ. Միրումյան, Ա. Բաբաջանյան, Ս. Աստվածատուրով**, Քաղաքագիտություն: Հանրագիտական բառարան, Երևան, 2004, էջ 153:

¹⁷ Տե՛ս Вебер М. Типы легитимного порядка: условность и право / Вебер М. Избранные произведения. М., 1990, с. 640.

¹⁸ Լեզիտիմության վերաբերյալ Դ. Իստոնի հայեցակարգային ըմբռնումների մանրամասները տե՛ս Easton D. A Systems Analysis of Political Life. New York, 1965, p. 278-310.

սարակական նշանակության մասին ժողովրդի մեջ ձևավորված պատկերացումներին»¹⁹: Եվ միանգամայն տրամաբանական պետք է համարել, որ նա քաղաքական գործունեության մեջ չափազանց կարևորում է այնպիսի «ընդհանուր ստանդարտի» ներդրումը, որի միջոցով քաղաքացիները կարող են գնահատել քաղաքական տարբեր որոշումները: «Ամեն մի քաղաքական համակարգ, - այդ կապակցությամբ գրում է Դ. Իստոնը, - ձգտում է ստեղծել և իր քաղաքացիների գիտակցության մեջ ներդնել աշխատանքային արժեքներ, այսինքն՝ իր լեգիտիմությունն ամրապնդող գաղափարախոսություն»²⁰: Հիմնահարցի վերաբերյալ գրեթե նույնական է նաև Ս. Սանիստեբանի տեսակետը, որը լեգիտիմությունը բնութագրում է իբրև հասարակության քաղաքական համակարգի հիմնատարը և լեգիտիմ է համարում այնպիսի իշխանությունը, «որն ընդունվում է զանգվածների կողմից, այլ ոչ թե պարտադրվում է նրանց»²¹:

Քաղաքական հարաբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ անկախ ռեժիմի բնույթից՝ ցանկացած քաղաքական իշխանություն գործնականում ձգտում է սահմանափակել «ուժի հարկադրանքն» այն պարզ պատճառով, որ **լեգիտիմությունը միշտ էլ հանդես է գալիս իշխանության ու հպատակների փոխհամաձայնության տեսքով**, ուստի իշխանությունը միշտ էլ ակտիվ համագործակցության կարիք ունի: Եվ քանի որ իշխանության ու հպատակների միջև հաստատված հարաբերական հավասարակշռությունը պատմականորեն տարբեր է, ըստ այդմ էլ դասակարգվում են լեգիտիմության տարբեր տիպեր՝ **ավանդական, խարիզմատիկ և լեգալ** (բանական-իրավական)²²:

Ավանդական լեգիտիմությունը հենվում է սովորությունների և տիրապետության ու ենթակայության ավանդական նորմերի վրա: Լեգիտիմության այդ ձևը Մ. Վեբերը դիտարկում է իբրև իշխանության աֆեկտիվ, զգացմունքային ու պարզունակ ձև, քանի որ ավանդական լեգիտիմության շրջանակներում «քաղաքական համակարգերը խորապես պահպանողական են, դրանց էլիտաներն իրենց իշխանությունը հիմնավորում են ժամանակի ընթացքում ուժգնացող ավանդություններով»²³: **Խարիզմատիկ լեգիտիմության** համար ելակետային է հանդիսանում «առաջնորդի բացառիկ շնորհը (խարիզման)», որը երբեմն հանգեցնում է «առաջնորդի պաշտամունքի»: Լեգիտիմության այս ձևը կարելի է անվանել նաև «անհատական լեգիտիմություն»: Ինչ վերաբերում է լեգիտիմության **լեգալ** (բանական-իրավական կամ ժողովրդավարական) տիպին, ապա

¹⁹ Նույն տեղում, էջ 278:

²⁰ Նույն տեղում, էջ 340:

²¹ Санистебан С. А. Основы политической науки. М., 1992, с. 39.

²² Լեգիտիմության տիպերի հայեցակարգային սկզբունքները ևս մշակվել են Մ. Վեբերի կողմից: Այդ ուսմունքի պաշտպանության դիրքերից հանդես են գալիս արդի քաղաքագետներից շատերը: Տե՛ս Вебер М. Типы легитимного порядка: условность и право, с. 639-640; Санистебан С. А. Основы политической науки, с. 40-44; Власть: Очерки современной политической философии Запада, с. 49-51; Гаджиев К. С. Политология, с. 112-113; Пугачев В. П., Соловев А. И. Введение в политологию, с. 108-110; Политология (под ред. проф. М. А. Василюка), с. 212-213; Политология: Энциклопедический словарь, с. 152, Կ. Պողոսյան, Կ. Միրումյան, Ա. Բաբաջանյան, Ս. Աստվածատուրով, Քաղաքագիտություն: Հանրագիտական բառարան, էջ 153 և այլն:

²³ Вебер М. Типы легитимного порядка: условность и право, с. 639.

նրա հիմքում ընկած է «բանականորեն ընկալված շահը», որի ազդեցությամբ զանգվածները կամովին հպատակվում են իշխանական որոշումներին: Լեգիտիմության այս ձևը կարելի է անվանել նաև **«կառուցվածքային կամ ժողովրդավարական լեգիտիմություն»**²⁴:

Իշխանության գործառնության բնութագրիչ առանձնահատկությունների շարքում քաղաքագիտության արդի տեսությունը մեծ տեղ է հատկացնում նաև **կառավարման ձևի ուսումնասիրությանը**: Այդ մոտեցումը խարսխվում է հասարակության քաղաքական կյանքի ընդհանրական մի շարք օրինաչափությունների վրա: Լինելով հասարակության քաղաքական համակարգի հիմնարար տարրերից մեկը՝ կառավարման ինստիտուտն առաջին հերթին հանդես է գալիս իբրև հասարակության քաղաքական կյանքի ոլորտներից մեկը և իբրև այդպիսին հենվում է պետականորեն մշակված և սահմանադրորեն (օրենքներով) ամրագրված այնպիսի պարտադիր սկզբունքների վրա, որոնք առանձնահատուկ դեր են կատարում նաև պետական քաղաքականության մշակման և ուղղվածության ձևավորման գործում: Քաղաքական կառավարման ձևի գործառնական առանձնահատկությունների ուսումնասիրությունը պետք է կարևորել և այն պատճառով, որ վերջինս հանդիսանում է **պետական բարձրագույն իշխանության նյութականացված ձևը** և իրենով պայմանավորում է քաղաքական իշխանության մեզամակարդակային ինստիտուտային կառուցվածքն ու վերջինիս տարրերի փոխհարաբերությունների ամբողջությունը²⁵: Եվ վերջապես նաև այն պատճառով, որ **քաղաքական համակարգի մեզամակարդակում քաղաքական իշխանությունը հանդես է գալիս մասնագիտացված հաստատությունների աստիճանակարգված ամբողջության՝ իշխանական ապարատի տեսքով**:

Քաղաքական իշխանության գործառնություններն անխուսափելիորեն ենթադրում են պետության և հասարակության, հասարակության տարբեր մակարդակների և խմբերի, քաղաքական ինստիտուտների, պետական կառավարման ապարատի և նրա մարմինների, կուսակցությունների, քաղաքացիների և այլնի միջև առկա

²⁴ Մանրամասները տես **Вебер М.** Типы легитимного порядка: условность и право, с. 639-640: Վերելյան մոտեցումների պաշտպանության դիրքերից հանդես են գալիս արդի քաղաքագետներից շատերը, տես **Санистебан С. А.** Основы политической науки, с. 40-44; **Власть: Очерки современной политической философии Запада**, с. 49-51; **Гаджиев К. С.** Политология, с. 112-113; **Пугачев В. П., Соловьев А. И.** Введение в политологию, с. 108-110; Политология (под ред. проф. М. А. Василика), с. 212-213; Политология: Энциклопедический словарь, с. 152; **Վ. Պողոսյան, Կ. Միրումյան, Ա. Բաբաջանյան, Ս. Աստվածատուրով**, Քաղաքագիտություն: Հանրագիտական բառարան, էջ 153 և այլն:

²⁵ Մեթոդաբանական այդ մոտեցման դիրքերից հիմնավորված չի կարելի համարել քաղաքագիտական այն պնդումը, թե քաղաքականության կարգավորիչ գործոնների բացահայտման գործում արդի քաղաքական փիլիսոփայության մեջ նկատելի է ծայրաստիճան վերացական մոտեցում: Առավել ևս հիմնավորված չէ այն պնդումը, թե այդ ճանապարհով «հաղթահարվում է ուժի և բռնության, իրավունքի և օրենքի (իրավաբանորեն ձևակերպված իրավունքի, բարոյական իրավունքի և ուժի իրավունքի) և հասարակության կարգավորիչ (մշակութային, հասարակական-հոգեբանական և այլն) մեխանիզմների հակասությունը»: Այս տեսակետը մերժելի է կանխակալ այն մոտեցման պատճառով, թե իբր «այդ միտումը սերտանում է ժամանակակից արևմտյան քաղաքական փիլիսոփայությանը, լիբերալ-առաջադիմական կողմնորոշմանը և հավասարակշռության հայեցակարգերի զաղափարախոսությանը», տես **Власть: Очерки современной политической философии Запада**, с. 46.

հարաբերությունների կարգավորում: Ժողովրդավարական երկրներում քաղաքական այդ պահանջը պրակտիկ կերպով իրագործվում է հասարակության մեզա- և մակրոքաղաքական մակարդակի ինստիտուտային այնպիսի վերին կառույցների միջոցով, ինչպիսիք են **օրենսդիր և գործադիր իշխանությունները**: Այդ համատեքստում վերլուծական ելակետ պետք է համարել այն, որ ցանկացած քաղաքական իշխանություն անխուսափելիորեն ենթադրում է պետության և հասարակության իշխանական կառույցների, քաղաքական և ոչ քաղաքական գործընթացների տարբեր մակարդակների կառավարում և վերահսկում, որը պրակտիկ քաղաքական կյանքում իրագործվում է նաև սահմանադրորեն (կամ օրենսդրական ակտերով) ամրագրված տարբեր մակարդակների լիազորություններով: Նկատենք նաև, որ ինչպես ամբողջության մեջ վերցրած հասարակության քաղաքական համակարգի կառավարումը, այնպես էլ քաղաքական վարչակարգի և պետական կարգի կայացումն անհնարին կլինի առանց հասարակությանը բնորոշ կառավարման տիպի: Իսկ պետական իշխանությունը կառուցվածքային և գործառնական ավարտուն տեսք կարող է ստանալ միայն համապատասխան իշխանության ձևավորմամբ²⁶:

Մի քանի նկատառումներ ևս: Քաղաքական իշխանության ինստիտուտացված կառույցները, որպես կանոն, ձևավորվում են որոշակի միջավայրի ազդեցությամբ: Սակայն չպետք է մոռանալ, որ «... իբրև կառավարման օբյեկտ՝ հասարակական կյանքը լիովին չի կարող ներառվել անգամ ամենակատարյալ կառավարման ապարատի կողմից: Բայց նա «անհրաժեշտ բազմազանության» է հասնում, եթե առաջին հերթին հասարակական կյանքի կառուցվածքին համապատասխան տեսք է ստանում և երկրորդ, ինչն ավելի կարևոր է, անհրաժեշտ մակարդակով իրականացնում է տեղեկատվություն ընկալելու և վերամշակելու իր ընդունակությունը»²⁷: Թեև միջավայրի ազդեցությամբ քաղաքական իշխանության ինստիտուտային կառույցները (միկրոհամակարգերը) օժտվում են կոնկրետ լիազորություններով և գործունեության առանձնահատուկ ոլորտով, այդուհանդերձ դրանց բոլորին էլ տիպական են ընդհանրական այնպիսի գործառնություններ, ինչպիսիք են հասարակական հարաբերությունների ամրագրումն ու վերարտադրությունը, համապատասխան գործունեության կարգավորումը, դրանցում մարդկանց («դերերի» կամ «կարգավիճակի») ներգրավումը և այլն²⁸:

Եվ միանգամայն օրինաչափ պետք է համարել, որ օբյեկտիվ այդ գործոնների ազդեցությամբ «պետական իշխանության ապարատը հանդես է գալիս իբրև տարբեր օղակներում ստորաբաժանվող աշխատանքների (գործառնությունների, իրավասությունների) բաժանում»²⁹: Այդ հիմնադրույթից տրամաբանորեն

²⁶ Քաղաքագիտության այդ սկզբունքների մանրամասները տես Политология: Энциклопедический словарь, с. 44; **Аверьянов В. Б.** Организация аппарата государственного управления (структурно-функциональный анализ). Киев, 1985, с. 19-20; **Андреев Ю. П., Коржевская Н. М., Костина Н. Б.** Социальные институты: содержание, функции, структура. Свердловск, 1989, с. 10-11 և այլն:

²⁷ **Курашвили Б. П.** Очерк теории государственного управления. М., 1987, с. 199.

²⁸ Տես **Андреев Ю. П., Коржевская Н. М., Костина Н. Б.** Социальные институты: содержание, функции, структура. Свердловск, 1989, с. 19.

²⁹ **Курашвили Б. П.** Очерк теории государственного управления, с. 199.

հետևում է այն, որ իշխանության ինստիտուտացված այդ բոլոր օղակները ենթադրում են **համապատասխան լիազորությունների առկայություն**, որի հետևանքով «իր գործառնության ընթացքում պետական իշխանությունը հանդես է գալիս իբրև ներքնապես տարբերակված միասնական ամբողջություն»³⁰: Այդ տեսանկյունից անընդունելի պետք է համարել քաղաքական իշխանության վերաբերյալ ամերիկյան քաղաքագետների այն պնդումները, թե այն «քաղաքական համակարգի այնպիսի ընդհանրացված միջոց է և հատկություն», որը միավորման կոնտեքստում հանդես է գալիս իբրև համակարգի տարբեր գործընթացների վրա ազդեցության իրականացում»³¹: Ճիշտ այդպես էլ անընդունելի պետք է համարել Կ. Դոյչի այն պնդումը, թե «Իշխանությունը քաղաքական «վճարման միջոց է», որը գործադրվում է այնտեղ, ուր այլևս չեն գործում ազդեցությունը, սովորությունը կամ գործառնությունների կամավոր համաձայնեցումը»³²:

Հիմնահարցի վերաբերյալ հետևողական մոտեցման դեպքում պետք է կարևորել այն պարագան, որ պետական իշխանության ինստիտուտացված բոլոր օղակները գործնականում հանդես են գալիս համակարգային տեսքով: Այդ պատճառով էլ «... **իր գործունեության ընթացքում քաղաքական իշխանությունը հանդես է գալիս իբրև ներքնապես տարբերակված ամբողջություն** (ընդգծումը մերն է՝ Ա. Բ.)»³³: Իսկ դրանից տրամաբանորեն հետևում է, որ բավարար չափով հիմնավորված չէ նաև այն պնդումը, թե «Իշխանության գլխավոր գործառնությամբ խմբային կոնֆլիկտների կարգավորումն է և ներհամակարգային հաղորդակցության իրականացումը», ուր հարկադրանքը հանդես է գալիս որպես բացառիկ երևույթ³⁴:

Իշխանության ինստիտուտացված բոլոր օղակները գործառնություն են կատարում համապատասխան օրենսդրական ակտերի, կանոնադրությունների և քաղաքական կյանքի իրողություններին համապատասխանեցված նորմատիվ ակտերի հիման վրա: **Այդ տեսանկյունից ևս պետական իշխանության ինստիտուտային կառույցներն ունեն ներքին ընդհանրություններ**, ինչպիսիք են հասարակական հարաբերություններում և գործունեության կոնկրետ ոլորտում համապատասխան կարգավիճակի հաստատումը, տվյալ ինստիտուտային կառույցին բնորոշ զուգորդված դերերի ամբողջացումը, գործունեության արդյունավետության բարձրացմանն ու ինքնավերարտադրմանը նպաստող հասարակական նորմերի հաստատումը և այլն³⁵: Քաղաքական իշխանության բնութագրական այդ հատկանիշներն էլ իրենցով առաջին հերթին պայմանավորում են քաղաքական համակարգի մեզամակարդակային այնպիսի ինստիտուտային կառույցների առանձնահատկությունները, ինչպիսիք են օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները:

³⁰ Նույն տեղում:

³¹ Տե՛ս **Parsons T.** Essay in Sociological Theory. Glencoe (III), 1954, p. 391.

³² **Deutsch K.** The Nerves of Government (Politische Kybernetik– Modelle und Perspektiven)– Freiburg (im Breisgau), 1970, p. 124.

³³ Տե՛ս **Курашвили Б. П.** Очерк теории государственного управления, с. 199.

³⁴ Տե՛ս **Deutsch K.** The Nerves of Government (Politische Kybernetik– Modelle und Perspektiven), p. 124.

³⁵ Մամրամասները տե՛ս **Андреев Ю. П., Коржевская Н. М., Костина Н. Б.** Социальные институты: содержание, функции, структура, с. 14-16.

Այդ տեսանկյունից պրակտիկ քաղաքական կյանքում **իշխանությունը սահմանադրորեն (օրենսդրորեն) ամրագրված իր գործառնությունները կարող է իրականացնել միայն պետության անունից**: Իսկ ընթացիկ կառավարչական գործընթացներ իրականացնելիս քաղաքական իշխանությունը կարող է հանդես գալ նաև գործառնական բազմադեմ հատկանիշներով օժտված և ներքնապես տարբերակված (աստիճանակարգված) կառույցի տեսքով: Ժողովրդավարական հասարակարգերի իշխանության պրակտիկան ցույց է տալիս, որ այն հետադարձ մեծ ազդեցություն ունի ինչպես հասարակության քաղաքական համակարգի, այնպես էլ ամբողջության մեջ վերցրած պետական կառավարման հիմնարար բազմաթիվ հատկանիշների գործառնական առանձնահատկությունների ձևավորման գործընթացների վրա:

Ահա այդ ամենով էլ պայմանավորված՝ քաղաքական իշխանության համապարփակ հատկանիշների կառուցվածքագործառնական առանձնահատկությունների վերլուծությունը համարվում է քաղաքագիտության արդիական կարևորագույն հիմնախնդիրներից մեկը:

К ВОПРОСУ О ФУНКЦИОНАЛЬНЫХ ОСОБЕННОСТЯХ ПОЛИТИЧЕСКОЙ ВЛАСТИ

А. А. КАЛАШЯН

На основе анализа фактического материала показывается, что детерминированная сущностью человеческого общения власть проявляется как один из важнейших видов социального взаимодействия (властвование-подчинение), в которой властвующий субъект реализует свою волю и интересы. Во всех своих аспектах (господствующий, функциональный, коммуникативный) власть имеет социальный и политический статус и опирается на авторитет и силу закона.

Автором обосновывается, что высшей формой власти является политическая (государственная и общественная) власть, отличительными признаками которой являются моноцентричность, публичность, верховенство и многообразие ресурсов. В данном контексте рассматривается также легитимность власти.

Политологическим анализом раскрывается и оценивается также связь политической власти с институтами политической системы общества, нормативной базой, СМИ и т. д.

ON THE ISSUE OF FUNCTIONAL SPECIFICITY OF POLITICAL POWER

A. A. KALASHYAN

On the basis of the analysis of factual material the author shows that the power determined by the human relationships reveals as one of the most important forms of social relationship (domination-subordination) where the dominating subject exercises its will and interests. In its all aspects (dominating, functioning, communicating) the power has social and political status and bases on the authority and force of the Law.

The author shows that the highest form of the power is the political power (State and public). The specificities of the political power are monocentricity, publicity, leadership and diversification of resources. The legitimacy of the power is also analyzed in this context.

Under the methodology of political analysis the article interprets and evaluates the relationship of political power with the institutions of the political system of society, normative basis, Mass-Media, etc.